

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9646

641
<hr/>
10-67

1926

5262

ԿՈՒՅԻՒՆ «ՀՈՐԻԶՈՆ» ԳՐԱՏԱՆ, ՔԱՎԱԼԱ

ԽՈՂԱՆՈՑԻՆ ԳԻՐՔԸ



6-51

FB 2002

Ե Մ Ր Ա Գ Ր Ե Յ
Խոնարարացի՝ ՍԱՀԱԿ ՄՈՆՈՍԵԱՆ (Կեսարացի)

Միակ կեդրոնակի՝
«ՀՈՐԻԶՈՆ» ԳՐԱՏԱՆ — ՔԱՎԱԼԱ



(Ամեն իրաւունք հրատարակչին կը պատկանի)

2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀՈՐԻՉՈՆ» ԳՐԱՏԱՆ, ԳՎԱԼԱ

691

Խ-67

այ

ԽՈՂԱՆՈՑԻՆ ԳԻՐՔԸ



Միակ կեդրոնացեղի՝
«ՀՈՐԻՉՈՆ» ԳՐԱՏՈՒՆ — ԳՎԱԼԱ



(Ամեն իրաւունք հրատարակչին կը պատկանի)



LEBON TZEPAKIAN
BIBLIOTHEQUE "HORIZON"
KAGALLA

ՏՊԱԳՐ. «ՆՈՐՈՐ»

Ա. Թ. Է. Ն. Գ.

1926

LEVON DJERANIAN
LIBRAIRIE "HORIZON"
CAVALLA GEB

ԼԵՅՈՆ ԺԵՐԱՅԻԱՆ
ԳՐԱՏՈՒՆ «ՀՈՐԻՉՈՆ»
ԳՎԱԼԱ (Երևան)

60/6

5262

26625-Ա.3

ԽՈՂԱՆՈՑԻՆ ԳԻՐՔԸ

Ա — ԶՕՐՊԱՆԵՐ

- 1.— Թեյ շեհրիե չորպասը.— Ուզուած քանակու-
թեամբ ջուրը եռացնելէ վերջ պէտք եղածին չափ շէհրիե
նետէ՝ ինչպէս և ազ, վար առնելէ յետոյ պնակի մը մէջ 2
հաւկիթ մէկ լիմօնով զարկ, բարակէն ապուրին մէջ վազե-
ցուր՝ մէկ կողմանէ շերեփով խառնէ որ չի կտրի:
- 2.— Երկրզ շեհրիե չորպասը.— Ճիշտ վերինին նման
կատարէ:
- 3.— Արփա շեհրիե չորպասը.— Միեւնոյն ձեւով:
- 4.— Բիրինն չորպասը.— Մտի ջուրը եռացնելէ վերջ,
չափով մը բրինձ կը դնես կ'եփի: Յետոյ երկու հաւկիթը
լիմօնով թէրպիյէ կ'ընես, վրան կանցունես:
- 5.— Գուե պաթը չորպասը.— Ջուրը եռացնելէ վերջ
բրինձը նետէ, ինչպէս և ձիթապտուղի մեծութեամբ ման-
րուած հում միսը սր եփի: Վար առնելէ վերջ, տապակին
մէջ քիչ մը իւղով քիչ մ'ալ սալցա վարժեցուր և ապուրին
վրայ անցուր:
- 6.— Գեքմանական ապուր.— Ոսպը լաւ մը եփելէն
վերջ քամոցէն անցուր, յետոյ մտի ջուրով հեղուկ մը ըրէ
ու կրակէն վար առ: Քառանկիւն կարուած հացի կտորներ
իւղի մէջ տապկէ և ապուրին վրայ անցուր:
- 7.— Երեփիւք չորպասը.— Հաստ մաքարօնին մտի ջու-



5774-58

րով եփելէ յետոյ, քիչ մը իւզով քիչ մ'ալ սայցա իրարու
հետ վարժեցնելով վրան անցուր:

8.— Եփելով չորպա եօղուրսը.— Հաստ մաքարօնին
մտի ջուրով եփելէ յետոյ կրակէն վար առ: Ամանի մը մէջ
մածունը հարէ և վրան անցուր:

9.— Աւսրիական պէգելիա չորպա.— Պէզէլիան լաւ
մը եփէ, քամոցէ անցուր, յետոյ գուշ պաշը միտերը լեցուր,
աղ և պղպեղ դիր և չափաւոր ջուրով բոլորը մէկ քառորդ
ժամ եփէ:

10.— Ֆրանսական քիւրլի չորպա.— Սանին մէջ եր-
կու կտոր բրասա, չորս կտոր բաթաթէս (մաքրուած), մէկ
կտոր մաշտանոս, մէկ կտոր չալղամ (չողգոմ) մէկ թուրփ
մէկ կտոր դգում, քանի մը կտոր ալ քէրէվիզ ու ստեպղին
մանրէ և դիր սեղանը, կեր:

11.— Պեգելիա չորպասը.— Չոր պէզէլիան լաւ մը
լուարէ վերջ խաշէ և յետոյ մտի ջուրով բաց, վրան հացի
քթրով իւզ անցուր:

12.— Թիւրքի սեպգի չորպասը.— Բաթաթէս, քառօդ,
քէրէվիզ, կաղամը և կամ ուրիշ բանջարեղէններ ուլունկի
խոշորութեամբ մանրելէ յետոյ մտի ջուրով լաւ մը եփէ և
կամ կարագ իւզով, եթէ մտի ջուր չկայ:

Բ.— ԽԱՇԼԱՄԱՆԵՐ

1.— Պէյին խաշամասը.— Ոչխարին ուղեղին վրայի
մաշկը մաքրէ, քիչ մը ջուր ու աղ դիր և քիչ ժամանակ-
ուան մէջ խաշէ, և յետոյ առանձին պատրաստուած մտի
ջուրին մէջ կտոր կտոր մանրէ:

2.— Պոյուն խաշամասը սեօյիւլ.— Ոչխարին վզի
մասը սանի մէջ եփէ, քաշէ պնակը, աղ ու պղպեղ ցանէ,
կեր:

Ասոր պէս կ'ըլլան՝

3.— Գլ (թել) խաշամասը, 4.— Տեօ խաշամասը,
5.— Ճիկեր, 6.— Ֆիլթօ, 7. Պրգոյա խաշամաները:

— Պալըգ խաշամասը.— Չուկը լաւ մը մաքրելէ
յետոյ սանի մը մէջ խաշէ. հանէ սանէն և սոկորները դատէ
եթէ ձուկը կտոր կտոր ըլլայ մնաս չունի, աւելցած ջուրով
տասը կտոր բաթաթէս՝ մաքրուած և խաշուած խառնէ ձու-
կին հետ, աղ ու պղպեղ ցանէ ու կեր:

9.— Թավուխ խաշամասը.— Հաւը մաքրելէ վերջ աղէ
և սանի մը մէջ խաշէ, դիր սեղանը աղ և պղպեղ թաթիսէ
և ր:

Այսպէս կը պատրաստուին նաև՝

10.— Ճագար, 11.— Կախալ, (ֆեկիկ) 12.— Աղաւնի,
13.— Բար, 14.— Սագ և ուրիշ հաւեղէններ:

Գ.— ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐ

Բ Բ Ա Ս Ս

1.— Միսով.— Միսը կտոր կտոր ըրէ, սանի մէջ կար-
մըրցուր և վրան քիչ մը սայցա վարժեցուր ու պատրաստ
բրասա: վրան լեցնելով լաւ մը եփէ, չի մոռնաս աղ և պղպ-
պեղ գնել:

2.— Չիքաիւղով.— (տարմա) Բրասան ճիշդ իր երկայ-
նութեամբ կը խաշես և երկայնքին կը ճեղքես առանց ճեղ-

քը տակը անցնելու, այդ բացուածքին մէջ, առաջուընէ ձիթախղի մէջ կարմրցուած և սոխէ բրինձէ աղ և համեմով պատրաստուած փոքը՝ կը լեցնես և քառանկիւն փաթթելով սանի մէջ կը շարես և վրան դոցելու չափ ջուր կը լեցնես ու կ'եփես, այնպէս որ տակը շատ քիչ ջուր մնայ:

3.— Բրասա քավար.— Բրասային արմատէն մինչեւ կանանչին սկիզբը, բթամատի մեծութեամբ և հաւասար չափով կտրէ, սանին մէջ լեցուր, վրան ալ ջուր՝ մինչեւ բրասին ծածկուիլը, լաւ մը խաշելէ ետք, քեավկիրի մէջ առ և ջուրը քամէ: Հաւկիթի մը դեղնուցը, ամանով պատրաստուած ալիւրի մէջ խառնէ, յետոյ բրասային ջուրէն քիչ քիչ վրան թափելով մալէզ մը շինէ, եթէ մալէզը աչքի թոյլ կ'երեւայ կրնաս տակաւին ալիւր խառնել, չի մոռնալով աղը:

Խաշած բրասան այս մալէզին մէջ թաթխելով մէկիկ մկկիկ առատ ձիթախղի մէջ կը տապկես, շատ դօրաւոր կրակի վրայ:

4.— Բրասա պէտեղի.— Վերի ձեւով բրասան խաշելէ և քամելէ յետոյ, ընտիր ձերմակ պանիրը ծակերէն ներս կը խօթես և միւսնոյն ձեւով կը տապկես:

4.— Բրասա ֆուրուեր.— Բրասան բարակ և կլոր կը ջարդես և լաւ մը խաշելէ վերջ ջուրը կը քամես: Փուռը երթալիք ամանը լաւ մը իւղելէ յետոյ, կարգ մը բրասա և կարգ մ'ալ իւղին մէջ կամ կրակին վրայ լաւ կարմրցած հացի բարակ շերտեր կը զետեղես ատոր վրայ ալ մնացեալ բրասան տարածելով հացերը ծածկելէն վերջ, քանի մը շերտ Գաւալալ պանիր վրան կը զետեղես, յետոյ տեղ տեղ կարգ իւղ գնելով փուռը կուտաս:

6.— Բրասա սկրաքեց.— Բրասան, վերի ձեւով շատ բարակ կը կտրես, բրասայիդ չափ բաթաթէս կը ջարդես նոյն բարակութեամբ, բաթաթէսը քիչ իսկ բրասան լաւ մը կ' խաշես, քաշկավայ կամ կօրվէր պանիրը բէնստէ կ'ընես մէկ թէյի գաւաթ, թէյի գաւաթ մը կաթին մէջ

երկու հաւկիթ կը զարնես: Փուռի ամանը իւղտելէ յետոյ կարգ մը բրասա, և կարգ մը բաթաթէս և փոշի պանիրը կը զետեղես, յետոյ դարձեալ կը կրկնես նոյն ձեւով, և ամէնէն վրան հաւկիթով զարնուած կաթը կ'անցունես աղ և սեւ պիպիս դնել չի մոռնալով, կուտաս փուռը:

Կ Ա Ր Ն Ա Պ Ի Թ

1. Միսով.— Ճիշտ միսով բրասային պէս կ'ընես:
2. Մուսագգա.— Մեքենայէն քաշուած միսը տապակի մէջ իւղով և սոխով կը կարմրցնես և կարնապիթը վրան կը կոխես, չի մոռնալով աղ, կարմիր պղպեղ և քիչ մալ սալցա դնել:
3. Կարնապիթը եւ մուրքալը.— Կարնապիթը խաշելէ ետք ջուրը քամէ, կտոր կտոր բրէ և զարնուած հաւկիթի մէջ թաթխելով կարագ իւղով տապկէ:

Կ Ա Ն Ա Ձ 1 Ա Ի Ռ Ի Ա

1. Միսով.— Ֆասուլիան մաքրէ, կտոր կտոր միսը սանին մէջ խորովէ, վրան քիչ մը սալցա վարժեցուր և լուբիան լեցուր, վրան դոցելու չափ ջուր դիր, մէկ ժամ եփելէ վերջ վար առ:
2. Ֆասուլիա մուսագգա.— Ֆասուլիան մաքրէ, պատրաստէ մեքենայէն քաշուած միսը տապակին մէջ իւղով և սալցայով կարմրցուր, լուբիան վրան կոխէ, ջուր դիր քիչ մը և մէկ ժամ եռացնելէ վերջ, վար առ:
3. Ձիթախղով.— Լուբիան կը մաքրես պատրաստ կ'ըլլայ, ձիթախղը կ'այցրես քիչ մը ջարդուած սոխ մէջը կը կարմրցնես, գդալ մը սալցա, աղ և պղպեղ նետելով կը վարժեցնես և լուբիա կը լեցնես վրան, բաւականաչափ ջուրով կ'եփես:

Գ Է Բ Է Վ Ի Ձ

1. Միսով.— Քէրէվզը մանր մանր կը կտրուս և սալ

բասու կը մնայ, սանին մէջ կտրատուած միսը կը տապկես իւզով, քիչ մը աղ, համեմ և սայցա խառնելէ ետք քէրէ՝ վիզը վրան կը կոխես և բաւականաչափ ջուր դնելով կեփեն:

Բերպիլի քէրէվիզ.— Քէրէվիզը կը խաշես տերեւով և կոթով ու ջուրը կը քամես. միսը առանց սալայի իւզով կը կարճրցնես, յետոյ քէրէվիզը վրան կը կոխես քիչ մը ջուրով կ'եփես: Վար առնելէ յետոյ երկու հաւկիթով լիմօն մը թէրպիլէ կընես վրան կանցունես:

3. Քէրէվիզ օրթախիւզով.— Քանի մը խոշոր գլուխ քերէվիզ մաքրէ, և քանի մը կտոր ալ բաթաթէս: Մանին մէջ ձիթախիւզը լեցուր և քանի մը փոքր սոխեր նետէ թող կարմրի. ատոր վրայ աւելցուր քէրէվիզը և բաթաթէսը փոքր փոքր շերտերու բամբուած: Մէկ մատ բարձր լեցուր ջուրը և եփէ: Էնկիտարին պէս պէտք է ջուրը քաշէ և յետոյ պղնձը, կեր:

Բ Ա Թ Ա Թ Է Ս

1. Միսով.— Նախ միսը մանրէ և կարմրցուր, վրան սայցա վարժեց ւր և մանրուած բաթաթէսը, աղ, համեմ և ջուր գիր եփէ:

2. Քեօօքէ.— (Տես քէօօթիները):

3. Տապկած.— Բաթաթէսները մատի երկայնութեամբ բարակ մանրէ աղէ, և իւզի մէջ տապկէ, յետոյ զարնուած հաւկիթը տապակին մէջ տապկուած բաթաթէսին վրայ անցուր, քիչ ետք վար առ:

4. Մուսագգա.— Բաթաթէսները տափակ մանրէ և կարմրցուր. այդ բաթաթէսը փուռի տապակին մէջ կարգ մը շարէ և տապկուած գրքման վրան անցուր և կարգ մը ևս բաթաթէս գիր, քիչ մը իւզով սայցա չինէ վրան անցուր, քիչ մ'ալ ջուր գնելով փուռը եփէ:

Գ Ա Պ Ա Գ

1. Գապաֆ պասկըս.— Միսը կտորի վերածէ և սանի մէջ իւզով տապկէ, քիչ ալ սայցա վարժեցուր. մաքրուած զգուժը կտորներու վերածէ և մսին վրայ լեցուր, քիչ բան մը ջուր դիր և ետայէն ետք կրակէն վար առ:

2. Գապաֆ օլմասը.— Դուժմին երեսը քերէ, միջուկը հանէ թող պտարաստ ըլլայ: Մեքենայէ քաշուած հում մսին մէջ լուացուացուած բրինձը, աղ, համեմ, աննուխ և քիչ մ'ալ սայցա դիր ու շաղուէ, և գայն զգուժներուն մէջ լեցուր մինչեւ կէս հասակը, շարէ զանոնք սանին մէջ բաւական ջուր դիր և ժամ մը ետայէ յետոյ, կրակէն վար առ:

3. Գապաֆ մուսագգա.— Մեքենայէն անցուած միսը սոխով, սայցայով կարմրցուր, զգուժը երկայնութեանը տափ ձեւով կտրէ, իւզի մէջ քիչ մը տապկէ, յետոյ տապակին մէջ կարգ մը զգուժ, վրան կարգ մը գրքմա գիր, այսպէս մէկ քանի կարգ բրէ և ամէնէն վրան զգուժ ըլլալով ջուրը հաւասար լեցուր և փուռը դիր եփի:

4. Գապաֆ գարնը Եարք.— Դուժմին փորը քիչ մը բաց և հանէ նետէ, յետոյ իւզի մէջ տապկէ, քաշէ մնացած իւզին մէջ մեքենայէն քաշուած միսը սոխով միասին կարմրցուր և բամբէ զգուժներուն մէջ, զգուժին մսին եփած երևոյն վրայ տափակ կտրուած թօմաթէսները շարէ և կարգով տապակին մէջ դիր, բաւականաչափ ջուր լեցուր ետացուր և կրակէն վար առ:

5. Գապաֆ եուժուրքալլ.— Դուժմները տափակ իւզի մէջ տապկէ, յետոյ զանոնք զարնուած հաւկիթին մէջ թաթիսէ և նորէն իւզի մէջ կարմրցուր քիչ մը, վրան սրտատորով մածուն անցուր, կեր:

6. Գապաֆ զէլիքնեալլը.— Դուժմները բնկոյցի խոշորութեամբ մանրէ և պտարաստ թող մնայ: Զիթախիւզը ալրէ, մէջը ջարգէ բաւական սոխ, մայտանօս քանի մը պճեղ սխտոր միասին մեղցուր, յետոյ վրան զգուժները

կոխէ, բաւականաչափ ջուրով քիչ բան մը եփելէ ետք, մէջը երկու սուրճի դաւաթ բրինձ վրան ցանէ, դոցէ բերանը թող եփի կէս ժամ եւս :

Բ Ա Թ Լ Ը Յ Ա Ն

1. Սիլվմէ.— Բաթլըճանը երկար կտրելով իւղի մէջ տապկելէ յետոյ, ան իւղով կտոր կտոր միտը եւս կարմրացուր և անոր վրայ բաթլըճանը կոխէ վրան շարէ տափակ կտրուած տոմաթէսները և բաւականաչափ ջուր դնելով եռացուր :

2. Մուսագգա.— Քաշուած միտը սանի մէջ կարմրացուր քիչ մը սոխոտ միասին, բաթլըճանները տափակ կըտարէ և իւղի մէջ տապկէ, տապակին յառակը կարգ մը տապկած բաթլըճան շարէ և վրան գըլմա անցուր, յետոյ նորէն բաթլըճան և վրան գըլմա անցուր, իսկ ամէնէն վրան տափակ մանրուած տոմաթէսներ շարէ, բաւական ջուր դիր եփէ :

3. Բաթլ. Տօլմասը.— Բաթլըճանին միջուկը հանէ մեքենայէն քաշուած միտը, սոխ քրինձ, անանուխ, մայտանուս և քիչ մ'ալ սալցա, բոլորը միասին շաղուէ և բաթլըճանին մէջ լեցուր մինչև կէսը : Շարէ զանոնք սանի մը մէջ վրան գոցելու չափ ջուր լեցնելով, եփէ :

4. Գարնը Եարբ.— Ճիշդ դրամին գարնը եարբքին նման :

Գեպասը.— Բաթլըճանին կոթերով վրայի մաշկը հանէ, կոթը թող մնայ, այդ կոթերուն վրայ հինգական կտոր միտ անցուր և յետոյ տապակի մէջ բաթլըճանները կարմրցնելով գարձեայ տապակին մէջ քով քովի շարէ անանկ սր միտերը մէջտեղը գան, անոնց վրայ տափակ կտրուած տոմաթէսները շարէ, ջուր դիր եռացուր :

6. Բաթլըճան գըգարբմասը.— Կլոր կտրուած բաթլըճանները, վրան սխտորով մածուն անցուր :

7. Բաթլ. Վաչասը.— Բաթլըճանը քառանկիւն կրտորէ, իւղի մէջ տապկէ, մնացած իւղին մէջ ջարդէ սոխ,

սխտոր, մայտանուս, աննուխ և քիչ մ'ալ սալցա դիր դարցուր և պատրաստ բաթլըճաններուն վրայ անցուր ու շատ քիչ ջուրով եռացուր :

8. Հիւնքեար պէյհեհի.— Բաթլըճանները կրակի վրայ խորովելէ վերջ, կեղեւները մաքրէ, մաքուր տախտակի մը վրայ դանակով ձեծէ ու կարագ իւղի մէջ քիչ բան դարձրնելէ վերջ քիչ մը կաթով եփէ :

9. Իմամ պալըլսը.— Բաթլըճանին երկայնութեանը երեք կողմերէն կեղեւը առ և այդ տեղերը քիչ մը ճեղքէ ու այդ ճեղքերուն մէջ ջուր ան սխտոր դիր և տապկէ ձիթաիւղով, աւելցած ջուրին մէջ սոխ, և մայտանուս ջարդէ, կարմրցուր. բաթլըճանները տապակին մէջ շարէ և սոխը վրան անցուր, քիչ մը սալցա կամ տոմաթէս շարէ ջուր դիր եփէ :

10. Բաթլ. օթուրբմասը.— Բաթլըճանը մէջտեղէն երկու կտոր ըրէ, մէջը փորէ և տապակին մէջ տապկէ, նըմանապէս քաշուած միտը սոխով աղ ալ դիր կարմրացուր, և լեցուր բաթլըճանին մէջ, զանոնք տապակին մէջ շարէ, տափակ տոմաթէսները բերանները գոցէ, ջուր դիր եփէ :

11. Բաթլ. պիօրեյի.— Բաթլըճանը երկայնքին բարակ բարակ կտրելով աղէ և իւղի մէջ տապկէ, թող պաղիամանի մը մէջ բաւական ճերմակ պանիր, քանի մը հաւկիթ կտորէ, մայտանուս ջարդէ և շաղուէ. տապկած բաթլըճանը անիւղ մէջ առ, դգալ մը պանիր տեղաւորէ ու վրան ուրիշ բաթլըճան մը ծածկէ, լմնալէ յետոյ այդ հաւկիթին մէջ թաթխելով իւղին մէջ կարմրցուր :

12. Ուրիօ սեասի մ'ալ.— Վոքք անուշ բաթլըճաններուն գարնը Եարբէի պէս փորը ճեղքէ, տապակին մէջ չորս կողմով կարմրցուր, և գըլմայի տեղ վերը ըրածիդ նման ձգմուած պանիրը կը լեցնես և փուռի ամանին մէջ շարելով, վրան քիչ մը կարագ իւղ դնելով փուռը կուտաս :

Է Ն Կ Ի Ն Ա Բ

Էնկինարը լաւ մը սոկէ, միշտ ձեռքդ լիմօնը պատրաստ կ'ունենաս և ստկած տեղերդ լաւ մը կը լիմօնես :

որպէսզի չի սեւնայ. իսկ քովդ պատրաստ պէտք է ունենաս ամանի մը մէջ բաւականաչափ ջուր, այնքան որ էն կէկնարները ծածկէ. ջուրին մէջ դգալ մը ալիւր խառնէ և միեւնոյն ատեն կէս լիմօն քամէ, որպէսզի էնկէկնարը սեւնայէ պաշտպանութի: Կ'առնես սան մը կը լեցնես բաւականաչափ ձիթախւղ և զայն տաքցունելով մէջը կը նետես քանի մը փոքր սոխ, քանի մը պճեղ ստեպղին, երբեմն քանի մը պճեղ ալ սխտոր. ատոնք բաւական մը կարմրելէ վերջ էնկէկնարները կը լեցնես վրան և մէկ անգամ դարհընելէ յետոյ, էնկէկնարները կը շակես քով քովի սանին մէջ և մինչեւ կոթին ոկիղբը ջուր լեցնելով կամաց կրակի վրայ կ'եփես, բերանը չետ մի բանար և սանին ձայնին սպասէ մինչեւ որ ճգայ, յետոյ վար առ պաղեցուր ատանց բերանը բանալու և պաղելէ վերջ պնակները քաշէ:

Բ Ա Կ Լ Ա Յ

1. Միտով.— Կտրուած միսերը կարմրցուր և վրան սալցա վարժեցուր: Մաքրուած բակլան մսին վրայ կոխէ աղ, պղպեղ և բաւականաչափ ջուր գնելով եփէ:
2. Ձիթախւղով.— Բակլային հատիկները ձիթախւղով կէս ժամու չափ դարձուր, յետոյ բաւականաչափ ջուր, աղ և համեմներ աւելցուր թոյլ եփի, պնակը քաշէ լիմօն քամէ:
3. Բակլայ եփեսի.— Բակլային հատիկները ջուրի մէջ լաւ մը խաշելէ յետոյ, շերտով ճզմէ վրան կարագ կամ ձիթախւղ անցուր, լիմօն քամէ, կեր:

Պ Է Ջ Է Լ Ի Ա

Միտով.— Միւր փոքր կտորներով սանի մը մէջ կարմրցուր, վրան սալցա աւելցնելով քիչ մը դարձուր, մաքրուած ու կտրուած պէզէլիան վրան կոխէ, աղ, կարմիր պիպես և քիչ մ'ալ ջուր դիր եփէ:

2. Պէզէլիա լափաւր.— Պէզէլիային հատիկները մըսի ջուրով լաւ մը եփէ, աղ և սեւ պիպիո գիր ու շերտփով ճզմէ որ թանձրանայ, վրան կարագ իւղ անցուր կեր:

Ս Պ Ա Ն Ն Ա Դ

1. Միտով.— Սպաննաքը մաքրէ, ջարդէ և ջուրով խաշէ, կտոր կտոր միսերը սոխով կարմրցուր, սալցա, աղ և համեմ վարժեցուր վրան, խաշած սպաննաքին ջուրը քամէ, մսին վրայ կոխէ, շատ քիչ ջուր դիր և եփէ:

Ձիթախւղով.— Խաշած սպաննախը ձիթախւղով տապկէ քիչ մ'ալ սոխ միացնելով, մի մոռնար աղ և համեմ գնել տապկուածին վրայ լիմօն քամէ, կեր:

3.— ՍՊաննաք դալգանաւր.— Սպաննաքը լաւ մը խաշէ, քամէ և կարագ իւղի մէջ տապկէ: Յետոյ տապակին մէջ կարագ իւղ դիր և արնուած չորս հաւկիթ լեցուր իւղին վրայ թող տարածուի թերթի պէս եփելէ վերջ սպաննաքին վրայ փոէ, լիմօն քամէ, կեր:

4. Սպաննաք եռմուրքալը.— Սպաննաքը լաւ մը խաշէ և քամէ տապակին մէջ կարագ իւղով տապկէ և տապակին մէջ փոէ՝ վեց հաւկիթ վրան աչք աչք կտորէ, քիչ մը ջուր, աղ, պղպեղ դիր և քիչ մը եռացուր, լիմօն քամէ և ր:

5. Սպաննաք մուսագգա.— Սպաննաքը լաւ մը խաշէ քամէ, թող մնայ: Քաշուած միսը սոխով միասին տապկէ վրան սալցա, աղ և համեմ դիր, վարժեցուր, տապակին մէջ կարգ մը սպաննաք, վրան կարգ մը դըլմա տարածէ վեց հաւկիթ լաւ մը գարկ և կերակուրին վրայ լաւ մը տարածէ դգալով շատ քիչ ջուր դիր, բերանը դոցէ թող եռայ: Հաւկիթը եփելով բթամատի չափ պիտի բարձրանայ յետոյ վրան լիմօն քամէ, կեր:

Պ Ա Մ Ի Ա

1. Միտով. կտրուած միսը սոխով միասին կարմրցուր վրան սալցա վարժեցուր, աղ և համեմ դիր և մաքրուած պամիան վրան կոխէ ու բաւականաչափ ջուր դիր թող եփի:

2. Ձիթախւղով.— Մաքրէ, ձիթախւղէ տապակին մէջ

դիր, ջարդուած սոխը կարմրցուր, սալցա աղ և համեմ վարժեցուր և սանի մէջ քաշէ, ջուր լեցուր եփէ, և լիմօն քամէ կեր:

Թ Ի Ե Բ Լ Ի Բ Մ Ի Ս Ո Վ,

Իանի մը բաթաթէս. քանի մը կտոր բրաւս, մէկ մաս ուլ քիչ մը քէրէվիզ, քանի մը կտոր դղում, ստեպղին պամիա, կանանչ լուրիա մանրէ, սանի մէջ միսը կտոր կտոր կարմրցուր սոխով միասին, քիչ մը սալցա, աղ և համեմ վարժեցուր և մսին վրայ լեցուր բանջարեղէնները, բաւականաչօք ջուր դիր եփէ:

Տ Օ Մ Ս. Թ Է Ս

1. Տօլմասը. — Տօմ թէսներուն մէջը կը պարպես, քաշուած միսը, բրինձ, սոխ, մայտանօս աղ և համեմ միասին շաղուելով տօմաթէսսին մէջ կը լեցնես, յետոյ դաննաք սանի կամ տաղակի մէջ կը շարես տեղ տեղ իւղ կը դնես և փոււը կուտաս կամ տունը կ'եփես:

2. Օմլէք. — Տօմաթէսին կուտերը և կեղեւները հանէ մնացածը բարակ բարակ իւղի մէջ կարմրցուր, քիչ մը աւելցուր և հաւկիթները աչք աչք տօմաթէսին վրայ կոտրէ եփէ:

3. Տօմաթէսի փիլաւ. — [տե՛ս փիլաւները]:

Լ Ա Հ Ա Ն Ա

1.— Գաբուսկա. — Միսը ընկոյզի մեծութեամբ մանրէ, սանի մէջ իւղով կարմրցուր, վրան համեմները անցուր սպուրի դգալով մը սալցայով ալ վարցեցուր և յետոյ ջարդուած լահանան վրան կոխէ քիչ ջուրով եփէ:

2.— Եալաներ սօլմասը. — Լահանային տերեւները եռացած ջուրի մէջ թաթխէ հանէ, ձիթաիւղով բրինձը անուխը և համեմները վարժեցուր, յետոյ տերեւներուն մէջ դնելով: Սանի մէջ դիր՝ ջուրով եփէ, լիմօն անցուր:

Գ.— ԳՐԶԱՐԹՄԱՆԵՐ ԵՒ ՄՍԵՂԷՆՆԵՐ



1. Ռօսօ. — Գառնուկին պուտը չորս կողմով կըրցուր, պղտիկ դանակով ծակծկէ և անոնց մէջ սխտորի պճեցներ աղը թաթխելով խօթէ: Սպուրի դգալ մը մածուները մսին չորս կողմը քսէ և սանի մէջ կարագ իւղով կարմըրցուր: յետոյ դաւաթ մը ճերմակ գինի վրան անցուր և սանին բերանը գոցէ, ականջ տուր թէ միսը կը ճգա՞յ, եթէ այո, այն ատեն դաւաթ մը ջուր դիր, և բաւական եւս եռացնելէ յետոյ վար առ և տափակ տափակ կտրելով պնակի մը մէջ շարէ, կեր:

2. Սալցալը ռօսօ. — Միււնոյն տեսակը, առանց գինիի սալցայով ըրէ:

3. Ֆիլօթ սօքե. — Երկար ֆիլէթօն սանի մէջ կարմըրցուր, դաւաթ մը գինի վրան անցուր, աղ և համեմ դիր, լաւ մը եփէ, յետոյ բարակ բարակ կտրէ, պնակին շուրջը շարէ, իսկ մէջտեղը կարագ իւղի մէջ տապկած բաթաթէս կարնիթուրան դիր կեր:

4. Գօթըլիդ հաւկիթով. — Բրզօլաները ձեծէ, աղէ, համեմէ և պատրաստ ձեծուած կալէթային մէջ և վերջն ալ հաւկիթները թաթխելով իւղով տապկէ:

5. Բիկանիլի ֆէպպ, — Խոր չերտով միսերը կարող իւղով կարմրցնելէ վերջ վրան բիկանի - քէպպ օթը փչրէ ու քիչ մը ջուր լեցնելով մազ մազ կրակին վրայ դիր եփէ:

6. Բրզօլա սֆաւա. — Բրզօլացուները աղէ, պղպեղէ և կամաց կրակի վրայ սկառա ըրէ առանց կրակին բոցը հանելու և կեր:

7. Բրզօլա սալցալը. — Բրզօլաները կարագ իւղի մէջ կարմրցուր, յետոյ սալցայով վարժեցուր, աղ և համեմ դիր և քիչ մը ջուրով եփէ:

8. Բիազը բառ ֆեպայը.— Միսը ընկոյզի մեծութեամբ մանրէ և իւզով կարմրցուր, առանց սալցայի աղ և համեմ գիր, չափաւոր ջուրով եփէ: Մայտանսու և սոխ բիազը բէ, կեր:

9. Սալցալը բառ ֆեպայը.— Միսնոյն ձեւով միսերը սանին մէջ կարմրցուր, աղ համեմ և սալցա վարմեցուր, չափաւոր ջուրով եփէ,

10 Բեաղը ֆեպայը.— Միսը, ոսկորոտ կամ ոչ, ափի մեծութեամբ կտրէ, աղ և համեմ ցանէ. թող ֆեպայ: Սոխը բիազը բէ, նետը խառնելով աննանուխ, մայտանսու թէլէօտը յետոյ քառակուսի և դիմացկուն թուղթերու մէջ միսերը դիր, վրան բիազ և քիչ մ'ալ կարագ իւզ անցուր թուղթը լաւը ծրարէ և փուռի թավային մէջ շարելով փուռը տուր. վերջը թուղթը բաց քէպայները պնակ քաշէ:

11. Ռոզպիճ ա լանկիլէ.— Մեքենայէն քաշուած մըսին մէջ մայտանսու, թէլէօթը և հացի միջուկ գնելով շաղուէ: Երեք խաշած հաւկիթի գեղիները հանէ և շարէ գըյմային վրայ ծայրէ ի ծայր թող ծածկէ, յետոյ փողի պէս բրէ գըյման, մսին մէջի մորթը հանէ և այդ գըյման մէջը փաթթէ և կտրէ ճիշտ ժամպոնի նման և կրկայնութեամբ, յետոյ կարագ իւզի մէջ կարմրցուր և վըրան դաւաթ մը ձերմակ գինի անցուր, եփելէ վերջ կերակուրը տափակ տափակ մանրէ և պնակը քաշէ, կեր:

12. գըզարբմա.— Ափի մեծութեամբ միսերը սանի մէջ տապկէ, ջուր դիր, բերանը գոցէ թող եփի որ սանին տակը 2—3 դգայի չափ սալցա ֆեպայ ցանցած ըլլայ:

13. Պեօլրեկ սօթ.— Պեօլրեկը մանրէ և սանի մէջ տապկէ առանց սալցայի քիչ մ'ալ սոխ միասին, աղ, համեմ և դաւաթ մը ձերմակ գինի դիր եփէ:

14. Պեօլրեկ եահնիսի.— Մանրուած պեօլրեկները իւզի մէջ տապկէ, վրան աւելցուր սոխ, սխտոր, համեմ և մայտանսու, քիչ մը սալցա և չափաւոր իւզ դիր եփէ:

15. Պեօլրեկ շաբար.— Պեօլրեկին մաշկը հանէ ճիշտ մէջանգէն տափակ ձեւով կտրէ, աղէ չիչերու մէջ անցուր և կամաց կրակին վրայ խորովէ, վրան սոխ, մայտանսու և թէլէօթը բիազ ընելով կեր:

16.— ձիկեր քավաոր.— Սեւ թոքը տափակ ձեւով կտրէ աղ, աղութի մէջ թաթիկէ, սապկէ և վրան բիազ անցուր:

17. ձիկեր եահնիսի.— Մանրուած թոքերը աղէ և համեմէ, սանի մէջ դիր, թոքերը լեցուր. սոխ սխտոր մայտանսու, սալցա և չափաւոր ջուր գնելով եփէ:

18. Պեյիկ քավաւ.— Ուղեղին մաշկը հանելով շատ քիչ խաշէ կտոր կտոր մանրէ, փոշի կալէթան թաթիկելով տապկէ, լիմոն անցուր, կեր:

19. Պեյիկ սօթ.— Մաշկը հանէ, ուղեղին և ընկոյզի մեծութեամբ մասերու բաժնէ ու սանի մէջ կարագ իւզով տապկէ ջուրի մէջ գաւաթ ձերմակ գինի անցուր և քիչ բան մը կուացուր:

20 Հինսի գըզարբմաւ.— Հնդկահաւը մորթէ և կուկորգէն փշէ որ ուռի և կապէ կուկորգէն: Մազերը այրէ, փորը ձեղքէ, և բոլոր գործիքները հանէ, իրեն համեմատ իւզոտ սանի մը մէջ գնելով իւզով կարմրցուր քիչ մը սալցա միասին վարմեցուր, չափաւոր մսի ջուր դիր, եփէ. բաթաթէսը մատի երկայնութեամբ կտրէ, կարմրցուր և միասին սեղան դիր:

(Բոլոր հաւազգիները միեւնոյն ձեւով կը պտտրասուին):

21. Թավեան գըզարբմաւ.— Նապաստակին մորթը քիթիցէն վերջ, իր մէջ պարունակած արիւնը զատ աման մը առ: Նապաստակը ափի խոշորութեամբ մասերու բաժնէ, կարագ իւզով տապկէ և բաւական սոխ ալ միասին մեուցուր, աղ և համեմ գիր և արիւնը վրան լեցուր, շիշ մը ձերմակ գինի աւելցուր, եփէ:

22. Թավեան եահնիսի.— Նապաստակը մաքրէ, ափի խոշորութեամբ մասերու վերածէ իւզի մէջ կարմրցուր միասին սոխ, սխտոր, սնունխ, թէլէօ-



աը, աղ և համեմ, իր արիւնը և շիշ մը դինի ևս լեցուր վրան եփէ:

23. Չեօմլէկ ֆէպար.— Առանց սակորի միսը հաւկիթի մեծութեամբ կարէ, պղինձէ երկայն պտուկի մը մէջ լեցուր, առանց սալցայի աղ և համեմ դիր, շիշ մը ձերմակ դինի լեցուր, պտուկին բերանը դոցէ և խմորէ, ու կամաց կրակի մէջ թաղէ, ահանջ տուր եթէ ձգայ կրակէն վար առ և վրան միայն մածուն անցնելով և կամ առանց մածունի կեր:

24. Թավլեան ֆեօքէսի [նապաստակի քրօքէթ].— Նապաստակին միսը իւղին մէջ լաւ մը կարմրոցնելէ յետոյ մեքենայէ անցուր, Սիւս կողմէ սանի մէջ քիչ մը իւղ, 2 դգալ ալիւր և կէս դաւաթ կաթով թանձր խմոր մը ոէ եփելով: Վերջը այդ դըյման ալ վրան լեցուր և աղուոր մը խառնէ, աղ, պղպեղը դիր, և ընկոյզի խոշորութեամբ կլոր կլոր ըրէ, փոշի կալէթան թաթխէ և առատ իւղի մէջ տապկէ:



Ե.— ՔԷ ՕՓԹ ԷՆԵՐ



1. Իզմիր ֆեօքէսի.— Միսը մեքենայէ անցուր, հացին միջուկը ջուրի մէջ նետէ, քիչ մը ետք առ, ջուրը քամէ խըյմային վրայ փշրէ: Երկու հաւկիթ կոտրէ, աղ և համեմ միասին մսին հետ չաղուէ, յետոյ տափակ կտորներու վերածելով ուրիշ զարնուած հաւկիթի մէջ թաթխէ և կարագ իւղով տապկէ: Եթէ կուզես լեմօն սեղմէ:

2. Իզմիր սուճուղը.— Մեքենայէն անցած մսին վըրայ կէս հացի միջուկ անցուր, մայտանօս, թէրէօտը աղ համեմ և ծեծուած սխտոր միասին չաղուէ մատի երկայնութեամբ կտորներու վերածելով պլորէ և կարագ իւղի մէջ տապկէ, յետոյ աւելցած իւղին մէջ սալցա վարժեցնելով վրան անցուր:

3. Գասըն պուսը ֆեօքէսի.— Միսը մեքենայէն անցունելով, հացի միջուկ մայտանօս, թէրէօտը, աղ և պղպեղ չաղուէ ու հաւկիթի մեծութեամբ կլոր մասերու վերածէ, նախ փոշի կալէթայի յետոյ հաւկիթի մէջ թաթխելով կարագ իւղով տապկէ, վրան լեմօն քամէ:

4. Թերպիլի ֆեօքէ.— Փիչ խաշուած բրինձը մայտանօս, աղ և համեմ քաշուած միսով չաղուէ, հաւկիթի ձեւով կլորցուր, և մսի ջուրով քիչ բան մը եռացուր, յետոյ քէօթէն ջուրէն քաշէ, մնացած ջուրին մէջ քիչ մը ալիւր դիր, մէկ կողմէն խառնելով, լիմօն մը քամէ, պղպ-

տիկ կտոր մ'ալ քօլա դիր: Այս ջուրը կամաց կրակի վրայ
դիր, միշտ խառնէ որ եռայ. եթէ եռայ կը կտրի: Երբոր
թանձրանայ դայն պատրաստ քէօֆիթէին վրայ անցուր:

5. Սկառա ֆօքսի.— Քաշուած միսը, հացի միջուկ,
մայտանօս, թէրէօտը, աղ և համեմ միասին շաղուէ, տա-
փակ կտորներու վերածէ, կամաց կրակին վրայ սկառա ք-
րէ, պնակը քաշէ և վրան բիաղ անցուր:

6. Բարաքես ֆօֆիթի.— Բաթաթէսը խաշէ, կեղե-
ւը հանէ և մեքենայէ անցուր, դայն քիչ մը ալիւր և աղ
դնելով շաղուէ, քաշուած միսը սանի մը մէջ կարմրցուր
կարագ իւղով, սոխ, մայտանօս, աղ, համեմ և թէրէ թը
միասին: Բաթաթէսները ափիղ մէջ հաւկթածեւ կլորցուր,
վերէն վար մէջանդէն մատովդ խոռոջ բաց, առանց քովերէն
կամ տակէն ծակելու, և պատրաստ խըյման սուրճի զգա-
լով խոռոջներուն մէջ լցուր, բերաննին լաւ մը գոցէ,
ու զարնուած հաւկիթը թաթիսելով կարագ իւղի մէջ տապ-
կէ, վրան սայցա կամ լիմօն քամէ, կեր:

7. Եահնիլի ֆօֆիթի.— Մեքենայէ քաշուած մսին մէջ
հացի միջուկ խառնէ, նաև քիչ մը մայտանօս, աղ ու հա-
մեմ: Բաւականաչափ սոխ ջարդելով իւղի մէջ կարմրցուր:
Պատրաստ միսը ծիրանի խոշորութեամբ կլորցուր սանի
մէջ դիր: Կարմրցուած սոխին մէջ քիչ մը սայցա վարժե-
ցուր և կլորիկներուն վրայ անցուր, քիչ մը ջուր դիր,
եփէ:



Զ.— Տ Օ Լ Մ Ա Ն Ե Ր



1. Գուզու ռօլմասը.— Մորթուած դառնուկը մի քիչ
ջուրի մէջ խաշելէ յետոյ, գառնուկին սիրտը, թոքը, և
պէօվրէկը մեքենայէ անցուր և կարագ իւղի մէջ կարմր-
ցուր մէջը խառնելով ափ մը ֆըստըք և երկու ափ չիշնիջ
աղ ու համեմներ: Կէս օխտ լաւ բրինձ քիչ մը խաշէ. և
զըյմային մէջ դիր, քիչ մ'ալ սայցա լեցնելով ամէնքը միա-
սին խառնէ: Այդ պատրաստ խիւսը գառնուկին փորը լե-
ցուր և կարէ: Խոշոր փուսի թավայի մը մէջ դիր, վրան
մածուն քսէ, և լաւականաչափ կարագ իւղ դնելով փուսը
տուր որ եփի:

2. Հիւնի ռօլմասը.— Հնդկահաւը մորթէ, կոկորդէն
փչէ լաւ մը և կապէ: Յետոյ սկսէ փետուրները փետտել,
առանց տաք ջուրը դնելու. ճերմակ մոմը վառէ, և հնդկա-
հաւին վրայի մնացած մազերը այրէ, փորը պզտիկ մը ճեղ-
քէ ու բոլոր գործիքները դուրս քաշէ: Հնդկահաւը տաք
ջուրին մէջ քիչ բան մը խաշէ, հանէ: Առանց ոսկորի քիչ
մը խղոտ միս և գործիքները (թոք, սիրտ եւն.) միա-
սին մեքենայէ անցուր: Ատոր մէջ աւելցուր չիշնիջ, ֆըս-
տըք, աղ, համեմ, պղպեղ և քիչ մ'ալ սայցա և եփուած
մի քիչ բրինձ, միասին խառնելով հնդկահաւին փորը լե-
ցուր և կարէ, վրան մածուն քսէ, թավային մէջ զեռեղէ,

կարագ իւղ դիր փուռը զրկէ:

Միեւնոյն ձեւով կը պատրաստուին՝ հաւը, սագ, բագը աղանիւն եւայլն. (Բանջարեղէնները իրենց կարգին տես):

ԳՈՒԶՈՒ ԶԷՎԻՐՄԷ ՔԷՊԱՊ

Մորթուած գառնուկը գլուխով միասին երկայն շիշի մը մէջ անցուր մէջը և դուրսը մածուն քսէ, աղ և համեմ ցանելէ վերջ կրակին վրայ դիր ու երկու ժամ կամ մաց կամ մաց դարձուր:

Տեօնէր քեպապ.— Ոչխարի կամ գառնուկի լոփ միսերը շիշի վրայ անցուր, աղը և համեմները ցանելէ վերջ, շիշին աակի և վրայի կողմը մէկ մէկ խոշոր տօմաթէս անցուր: Կրակին դէմը միշտ դարձուր, կարմրցածները դանակով հեւարդհետէ կարելով տո: Ատոնց վրայ սոխ, մայրանոսով բիւզ անցուր կամ քովզ գիր. կեր:

Է— ՊԷՅՐ ԷԿՆԵՐ

1. Էթի գըյմալը պօրեկ.— Ըստիր ալիւրէ բարակ թերթեր կը բանաս, վրայէ վրայ դնելով կը ծածկես լաթով մը որ չի չորնայ: Քաշուած սոխն ու միսը սանի մէջ կը կարմրցնես, յետոյ աղ, համեմ, և սալցա կը վարժեցը:

նես միասին: Այս գըյմայէն մէկ մէկ ապուրի դգալ թերթերուն մէջ դնելով քառանկիւն կամ եռանկիւն կը փաթթես ու կը տապկես:

2. Բէյնիլի պօրեկ.— Միեւնոյն ձեւով կը պատրաստուին թերթերը: Բաւական պանիրի մէջ քանի մը հաւկիթ և քիչ մ'ալ մայրանոս շաղուելով թերթերուն մէջ կը բաժնես կը փաթթես տապակին մէջ կը տապկես կամ փուռը կուտաս:

3. Սպաննալը պօրեկ.— Թերթերը պատրաստելէ յետոյ, սոխով միասին մեքենայէն քաշուած միսը տապակին մէջ կարմրցուր, չի մոռնալով քիչ մ'ալ մայրանոս և աղ: Փուռի տապակին մէջ կարագ իւղ դնելով 5-6 թերթ վրան կը շարես թերթերուն մէջ, հաւի փետուրով կարագ իւղ քսելով, յետոյ պատրաստուած սոյաննաքը վրան կը փռես ու ասոր վրայ կը շարես մնացեալ հինգ վեց թերթերը, մէջերը իւղոտելով: Ամէնէն վրան քիչ մը իւղ կը քրսես ինչպէս և եզերքները, վրան հաստ թուղթ մը պատելով փուռը կուտաս, մէկ ժամ փուռը մնայ, հանել կեր:

4. Պէյն Պօրեկի.— Ուղեղը լաւ մը խաշելէ վերջ զայն կը արորէս: Տուփի սունկերէն ամէն մէկը կիսելով բաւական մը կը խառնես ուղեղին մէջ, աղ և պղպեղ կը դնես ու դգալ դգալ պատրաստ թերթերուն մէջ դնելով կը փաթթես ու հը տապկես:

5. Թայիլի պօրեկ.— Պատրաստ թերթերը իւղոտելով 3-4 թերթ իրարու վրայ կը դնես ու խայինով շաքարը պոյ մը կը քսես, վրան երրեք չորս թերթ ևս կը դնես կը իւղոտես կը տապկես կամ փուռը կուտաս:

6. Բրասսա պօրեկի. (Տես բրասաները):
. Բաքլընան պօրեկի. — (Տես բաթլընանները):



Ը.— Փ Ա Ջ Ա Ն Ե Ր

1. Պառ փաշար.— Մորթով կամ առանց մորթի ոչխարին գլուխը խոշոր սանի մէջ և ուժով կրակի վրայ, գիշեր ատեն եփել, անոր ոսկորները հանել և վրան սխտոր քացախ անցնել:

2. Թեքպիլիլի փաշա.— Վերի նման գլուխը լաւ մը եփէ և ոսկորները հանէ, երկու հաւկիթեւ մէկ լիւծոն դարնելով վրան անցուր, կրակէն վար առնելէ վերջ:

3.— Այափ փաշարս.— Կովի, խոզի կամ ոչխարի ոտքերը մաքրէ, սանի մէջ լաւ մը եփելէ վերջ վրան սխտոր քացախ անցուր:

4. Թեքպիլիլի այափ փաշար.— Ճիշտ վերի նման պատրաստուած և եփած միտերը և եփած ոտքերը վար առնելէ յետոյ երկու հաւկիթ և մէկ լիւծոն թէրպիլէ ընելով, վրան անցուր կեր:

5. Խոզի գլխի փաշա.— Ոչխարի գլխի նման պատրաստել վրան սխտոր քացախ կամ հաւկիթով թէրպիլէ շինել, անցուր: կեր:

8. Էր փաշար.— Մսին ջրոտ տեղերը կտրէ, խաչէ և վրան սխտոր քացախ անցուր:

7. Իեկեմպէ փաշար.— Կովի կամ ոչխարի ստամոքսները լաւ լուալէ յետոյ մանր կտորներու վերածէ ու ատք ջուրի մէջ ձգէ մէկ երկու վայրկեան մնալէ յետոյ անանց վրայի ազտատու թիւնները լաւ մը քերէ և սանի մէջ գոհնոք եփէ, վրան սխտոր քացախ անցուր կամ թէրպիլիլի ըրէ:

Թ.— Խ Ո Ջ Ե Ղ Է Ն Ն Ե Ր

Խոզի պրծօլա.— Ճիշդ ոչխարի պրծօլայի նման կը պատրաստուի:

Խոզի միս լահանայով.— Խոզի փուխ միտերէն ընկոյզի մեծութեամբ կը կտրես և սանի մը մէջ լաւ մը կը կարմըրցնես ազ և պղպեղ նետելէ վերջ քիչ մ'ալ սայցա կը վարժեցնես: Մաքուր լահանան ջարդելով վրան կը կոխես չափաւոր ջուր կարմիր պղպեղ, մի քանի պճեղ ալ սըխտոր կը դնես, կ'եփի:

Թաւ քեպապ.— Ընկոյզի մեծութեամբ մանրէ միտը, ձիթախաղով կարմըրցուր, ազ և համեմներ նետէ, քիչ մը սայցա վարժեցուր, չափաւոր ջրով եփէ:

Խոզի միս ֆուրուց.— Լահանա թուրշին բաւական մանր ջարդելէ վերջ կարազ իւզով կարմըրցուր, խոզի միտը ընկոյզէն աւելի խոշորութեամբ մանրէ, ֆուրուց թափասըին մէջ միտը մէկ կողմ, լահանան մէկ կողմ լահանան միւս կողմ լեցնելով, առանց սեւէ համեմի և ազ պիպեօի փուռը տուր ու երբեմն խառնէ որ լահանան ամէն կողմով կարմրի:

Խոզի nouso կամ բոթի.— Պուտէն կարուած իւզի կըտոր մը սանին մէջ կը դնես, ազ պղպեղ քիչ մ'ալ ստեղզին քանի մը փոքր սոխ, աղուոր կը դարձնես ու կը կարմըրցնես իւզով: Յետոյ վրան քիչ առ քիչ ջուր կ'աւելցընես, նայէ որ ջուրը չառ չ'ըլլայ, երբ քաչէ նորէն լեցուր և երբ միտը այրեւտ եփած է, թող կրակին վրայ որ լաւ մը քաչէ: Կէս թէյի գաւաթ սեւ դինի վրան անցուր, վրան ջուրով աւելցուր, երբոր եփելէ վար առ, թող պաղի:

Բարի.— Խոզին գլուխը աղուոր մը խաչելէ վերջ, միտերը մեքենայէ անցուր, առանց ուղեղի: Այդ գըյմային մէջ պղպեղ գաւաթ մը գոնեաք, ազ պղպեղ, և 2-3 հաւկիթ կտորել, խառնելէ վերջ փուռի պղպեղ ամանի մը մէջ լաւ:

մը շաղուէ և փուռը առբ: Երեսը չ'այցրելու համար զլու-
խին մորթը ամանին վրայ ծածկէ: Մէկ ժամ փուռը պի-
տի ֆնայ. հանելէ վերջ թող պաղի, յետոյ իբր պաղ կերա-
կուր չերա չերա կտրէ քովը կարնիթիւսով մը կեր:

Յօղուրսը քեպալ.— Խոզին իւղոտ անդէն բաւական մը
բնկոյզի մեծութեամբ մանրէ, իւղի մէջ կարմրցուր, աղ և
համեմ գնելէ վերջ քիչ մը ջրով եփէ: Յետոյ վրան սխտո-
րով մածուն անցնելով, կեր:

Ժ.— ՄԷՋԷՆԵՐ (Աղաճիկ)

Մ Ս Ե Գ Է Ն

1. Տապկած ճիկեր.— վրան քիչ մը լիմօն անցուած,
կամ բիազ:

2.— Սէրտը և պէտլրէկը իւղի մէջ տապկէ սոխով
միասին և կէս գաւ⁵ գինիով եփէ:

3.— Կովի կամ ոչխարի ամորձիքները մէջտեղէն կըտ-
րէ, մաշկերը հանէ, աղէ, պիպեռէ և չիչի անցնելով կրա-
կին վրայ խորովէ, բէաղ դիր:

4.— Ամորձիքները մաքրէ, մէկ սանդիմ մեծութեամբ
կտորներու վերածէ, սանի մէջ իւղով տապկէ, վրան գա-
ւաթ մը կարմիր գինի անցուր, ջուրը քաշելէ յետոյ պը-
նակները քաշէ:

5. Սեօլիւ.— Ոչխարին վզին խաշուածը ոսկորէն հա-
նէ, պնակներու մէջ բամբէ, աղ, պղպեղ համեմներ դիր և
վրան բիազ ըրէ:

6.— Ուղեղը խաշէ, աղ գնելով, յետոյ մաշկը հանել
պնակը դիր, վրան լիմօն քամէ:

8. Ծիւք քեպալը.— Բուխ միտը երկու սանդիմ խոշո-
րութեամբ մանրէ, աղէ պղպեղէ, չիչը անցուր միս մը, տո-
մաթէս մը և կամայ կրակի վրայ խորովէ, պնակը դիր:

9. Գըլմալը քեօփէ.— Միսին կամիր տեղէն մեքենա-
յէ անցուր, մայտանօսը միասին, յետոյ վրան ափ մը փս-
չի կալէթա անցուր շաղուէ, այդ գըլմայէն հաւկիթի չափ
առ և չիչին վրայ անցուր և կրակին վրայ կարմրցուր, քիչ
մը լիմօն անցուր, կեր:

10.— Միւհենոյն տեսակը սկառայի վրայ ըրէ:

11.— Գուգու տօլմայի կտորներէն պնակի մէջ առ և
սեղան դիր:

12.— Հնդկահաւի տօլման նմանապէս ըրէ:

13.— Նապաստակի կերակուրներէն:

14.— Խաշուած հաւի մասեր:

15.— Ապո խտի և երչիկի սկառաներ:

16,— » » տապկածներ սոխով և մայ-
տանոսով:

17.— Ժամպօն, սալամ, կրավիէրա, գաչգալալ, ճեր-
մակ պանիր, ձեթապտուղ եւլն:

18.— Զուկին տապկուածը, սկառան բիազով, բլաքին
սարտէլան թօնը, քարիտէսը, սև կամ կարմիր խավեար,
բէնկաձուկ, բարամուտ տապկած, լաքէրտա, եւլն:

ԲԱՆՋԱՐԵՆԷՆ ՄԷՋԷՆԵՐ

1.— Հաւկիթով տապկուած դարնապիթ-
Հաւկիթով տապկուած սպաննաք:
Հաւկիթով պանրով և մայտանօսով տապկուած օմ-
լէթ:

Ֆասուլիա բիազը, եհնի բլաքի:
Տօմաթէս վարունգ, բանջար լահանա քարնապիթ
(խաշած) թուրչի:

Տուփի թուրչուներ, սարամուր ձուկեր, խաշած հաւ-
կիթ, սալոր և ուրիշ պտօնղներ:

ԺԱ.— ՏՕԼՄԱՆԵՐ

Երլի եափրաք յօլմար.— Տերեւները քիչ մը խաշէ , սոխով միասին մեքենայէ անցուած մսին մէջ խառնէ լըւացուած բրինձը , անանուխ աղ , և համեմներ դիր և ամէնը մէկ չաղուէ : Յետոյ տերեւներու մէջ դնելով փաթթէ և սանի մէջ կարգով չարէ , մինչեւ աօլմային վրայ ծածկելու չափ ջուր դիր , վրան տափակ պնակ մը գոցէ որ եռացած ժամանակ տերեւները չի փակուին , կափարիչը գոցէ թող եփի , ուտելու ժամանակ սխտորով մածուն անցուր կամ լիմօն քամէ :

Ձիբախլով.— Բաւականաչափ սոխ ձիթախլով լաւ մը կարմրցուր , մէջը բաւական բրինձ աննուխ , աղ , համեմ , եւ քիչ մ'այ սալցա խառնէ կրակէն վար առ եւ սկսէ խաշուած տերեւներուն մէջ լեցնել փաթթել ու սանի մէջ չարել . վրան գոցելու չափ ջուր լեցուր , ծածկէ որ եփի : Ուտելու ժամանակ վրան լիմօն քամէ կամ սխտորով թային անցուր :

Պիպեր յօլմար.— Պիպեաներուն մէջը մաքրէ : Բաշուած մսին մէջ բրինձ աննուխ , մայրանոս , աղ , պղպեղ սալցա՝ բոլորը միասին չաղուէ և պիպեռին մէջ լեցուր , սանի մէջ չարէ , քիչ մը ջուր լեցուր թող եփի :

Լանանա յօլմար.— (Տես լահանային մէջ) :

ԺԲ.— ԲԻԻՐԷՆԵՐ

Բարաքիս բիւրե.— Բաթաթէսը կեղպէ , չորսի վերածէ ու սանի մէջ խաշէ յետոյ ջուրը քամէ և բաթաթէսը լաւ մը ճմլէ , մէջը երկու երեք զգալ կարագ իւղ դիր , ու վրան քիչ քիչ կաթ լեցուր և խառնէ , չի մոռնաս աղ , ու պղպեղը , թանձր մալէղ մը շինելէ վերջ , տասը վայրկեան կրակին վրայ եփէ , վար առ :

Պեղեղիս բիւրե.— Վերոյիչեալ բաթաթէսին ձեւով պատրաստէ :

Սպաննաք բիւրե.— Շումինը լան մը խաշելէ վերջ , քամէ ու մեքենայէ անցուր , աղ , պղպեղ դիր և սանի մէջ իւղով տապկէ , եթէ մսի ջուր կամ սալցա կայ , կաթին տեղ գործածէ :

ԺԳ.— ՓԻԼԱԻՆԵՐ

Անեմ փիլալ.— Մսին լաւ տեղերէն կտրատելով —պուտամա— կէս օխայի չափ ընկոյզի խոշորութեամբ առանց սալցայի իւղով կարմրցուր : Կէս օխանոց քիասէ մը մինչեւ բերանը եռացած ջուր լեցուր և մսին վրայ նստեցուր : Մաքուր բրինձը գաղջ ջուրով լուա , քամոցէն անցուր , մսին վրայ կտր մը թափէ , աջնոյէս որ ջուրով քիասին մէջ մնայ , սանին վրայ ծածկոց մը փռէ , կափարիչը գոցէ և միջակ կրակի վրայ դիր թող եփի , մինչեւ որ մէջի ջուրը հատնի : Բեատէին ջուրը չոգիանալով լաթը կը թրջէ և ջուր կը ձորէ բրինձին վրայ որ եփելով կ'երկարի :

Բիրինն փիլալ.— Ուզուած չափով երկու ջուր և մէկ բրինձ , ջուրը եռացուր և լուացուած բրինձը վրան լեցուր աղ դիր և թող եփի , ջուրը քաշելէն վերջ կափարիչին վրայ չրջէ , կէս ժամ աչղ վիճակին մէջ մնալով հատիկ հատիկ կ'ըլլայ . յետոյ կարագ իւղը աչրէ , վրան անցուր , բերանը գոցէ : Կէս ժամ վերջը շերտիով խառնէ և բերանը բաց թող , լեցուր պնակը :

Նօնուսլու փիլալ.— Վերոյիչեալ պարզ փիլալին վրայ եփուած սիսեռ , լուբիս կ'անցունես :

Գուսպաքըլ փիլալ.— Պարզ փիլալու եփէ . միսը գուշ-

պաշը ձեւով կտրէ և կարագ իւզով կարմրցուը, աղ համեմ
և սալցա եւս վարժեցուը, քիչ մը ջուը աւելցուը, և լաւ
մը եփէ ու փիլաւին վրայ անցուը:

Պաշ եքլի փիլաւ.— Ոչխարին կամ գառնուկին գլուխը
խաշելէ յետոյ ոսկորները հանէ ու մտին վրայ բրինձ նե-
տէ. եփէ և վրան իւզ անցուը:

Գուգու իչի փիլաւ.— Գառնուկին, թոքը, սիրտը
եւայլն, դանակին տակ փոքրիկ քառակուսիներու վերա-
ծեղէ ետք, 6-7 գլուխ սոխ մանրէ, և տապակին մէջ իւ-
զով աղուոր մը մեռցուը, որ դեղին գոյն մը ստանայ, յե-
տոյ կրակէն քաշէ զայն ու մանրուած միսերը մէջո խառ-
նէ քիչ մը չիչնիչ ֆատրք, քիմիօն, եէնի պահար, աղ և
պղպեղ մեռցուը, և լաւ մը խառնէ, սանի մէջ դիր, վրան
ջուը աւելցուը, և լաւացուած ու պատրաստ բրինձը վրան
թափէ, անգամ մը խառնէ կրակին վրայ դիր, եփէ:

Ախյէ փիլաւ.— Պարզ բրինձէ փիլաւը եփէ, իւզ ան-
ցուը թող մնայ: Ուրիշ ամանի մէջ զէրտէն լաւ մը կը խաշես
որ կարմրագոյն ջուրի կը վերածուի, այդ ջուրը կը քա-
մեծ և մէջը բաւականաչափ չաքար կը հալեցնես, որմէ վերջ
երկու երեք ափ յուացուած բրինձ նետելով կ'եփես լափա-
յի պէս: Այս լափան կանցունես պատրաստ փիլաւին վրան:
Աւելի անուշ փափաքողը վրան չաքար կը ցանէ:

Տումարեւի փիլաւ.— Փիլաւը եփելէ վերջ տօմաթէսնե-
րը կիսէ և իւզին մէջ կարմրցուը, փիլաւին վրայ շարէ ա-
ւելցած իւզը փիլաւին վրայ անցուը և վրան գոցէ:

Պուլկուը փիլաւ.— Պուլկուը կը մաքրես կը լուսա:
կրակին վրայ սանին մէջ իւզ զնելով վրան տօմաթէս կը
մանրես, եւ քանի մը վայրկեան կը խառնես որ քիչ մը
խորովի, յետոյ պուլկուը վրան անցուը, խառնէ, չափա-
ւոր ջուը դիր, վրան գոցէ թող եփի:

Ուզով փիլաւ.— 1-2 ափ ոսպը լաւ մը եփէ, յետոյ
վրան ջուը աւելցուը ու լուացուած պուլկուը մէջը լեցնե-
լով եփէ: Ընտիր իւզով սոխը կարմրցուը, որան անցուը և
մաղ մաղ կրակին վրայ դիր:

ՄԱՔԱՐՆԱ ՓԻԼԱՆԵՐ


Մաքարնա բեկիրի, — Մաքարնան տաք ջուրի մէջ խա-
շելէ յետոյ վրան 1-2 սօսա ջուը լեցուը, և զգալով խառնէ
յետոյ զայն քամոցէն անցուը և միեւնոյն սանի մէջ իւզը
այրելով վրան անցուը: Գաշգալալը բէնտէ ըրէ և վրան
ցանէ:

Մաքարնա գըլմալը եւ սալցալը.— Մեքենայէ անցուած
կարմրցուը, քիչ մը սալցա, աղ, համեմ քիչ մալ ջուրխառ-
նէ եւ կէս ժամու չափ եռացուը մինչեւ որ ջուրը քաշուի.
յետոյ զայն լաւ մը խաշուած ու քամոցէ անցուած մաքար-
նաներուն վրայ անցուը, կեր:

Մաքարնա գըլմալը բասիչ.— Սմէնէն հաստ մաքար-
նան խաշէ, քամոցէ անցուը: Ուրիշ ամանի մը մէջ հարիւը
տրամ իւզ, հարիւը տրամ կաթ և մէջ հնդկ կան բնկոյզ
բէնտէյէն անցուը, եւ նեաէ կաթին, իւզին մէջ որոնց վը-
րայ եւս երկու զարնուած հաւկիթ անցուը, 100 տրամի
չափ ալ մոխ ջուը աւելցնելով բւլորը միասին միջակ կրա-
կի վրայ, առանց եռացնելու խառնելով թանձրացուը: Փու-
սի թէփսիին տակը կալէթաչի փոշին ցանէ, մաքարնան
կարգ մը փռէ, վրան ալ պատրաստ դըյման անցուը, յետոյ
կարգ մը եւս մաքարնա անցնելով անոր վրայ ալ լափան
լաւ մը ձեփէ: Վրան հաստ թուղթ գոցէ, բուռը տուր:
Ժամ մը ետք դուրս առ եւ բակլավայի կտորներու պէս
կտրէ, սեղան դ'ը:

Մաքարնա բէյեկիրի բասիչ.— Ճիշդ միեւնոյն ձեւով
կը պատրաստես, միայն մտին տեղ պանիր կը դնես:

Միսեալը փիլաւ կամ սալմա.— Միտեալին կեղեւը լ'ու
մը քերէ. եւ սանի մէջ խաշէ, յետոյ մաքրուած բրինձ եւ
աղ նեաէ, վրան ձիթաիւղ կամ կարագ իւզ անցուը. եփէ
կուզես քիչ մ'ալ սալցա, կանաչ սոխ եւ մայտանոս իւզին
մէջ մեռցուը եւ փիլաւին խառնէ:



ԺԴ.— ՍԱԼԱԴԱՆԵՐ

1.— ձերմակ լուբիա խառուած.— Գացախ եւ ձիթա-
խւղով:

2. Խառուած գաւրնապիթ.— Լիմօն կամ քացախ ձի-
թախուղով:

3. Խառուած ուղեղ.— Լիմօնով:

4. Վարունգ, տօմաթէս եւ մայտանոս:

5. Պարզ կանաչ սալթաներ:

6. Հազարէ [մառօլ] սալթա:

7. Չիրօզ, թէրէ օթով սալթա:

8. Էպէմ կէօմէճի, բաղատջուկ աղցան խաշած սալթա:

9. Ռօքիա սատիքիա սալթասը:

10. Տապկած միտիախի թէրաթուրով:

11. Սթրիտիա, միտիա կրակին վրայ խորոված, լի-
մօն քամէ:

ԺԵ.— ԽՕՇԱՊՆԵՐ

Գալըսը խօշապը.— Չոր ձիրանները լաւ մը կտայուր,
չափաւոր չաքար, քանի մը կտոր քարանֆիլ եւ թարչին
նեաէ, նայէ սր ջուրը առատ ըլլայ: Եփելէ վերջ պաղեցուր:

Էրիփ խօշապը.— Չոր սալորները միւսնոյն ձեւով պատ-
րաստէ:

Աւմուս խօշապը.— Չորցած տանձերը քիչ բան մը ա-
ռատ ջուրով խաշէ, մէկ երկու կտոր քարանֆիլ եւ թար-
չին նեաէ մէջը՝ բաւականաչափ չաքար ալ աւելցուր, եփէ
եւ պաղեցուր:

Թիւրլի խօշապ.— 100 տրամ չոր սեւ սալոր, 50 տը-
րամ կարմիր սալոր եւ 100 տրամ ինձիր դիր խաշէ:

Շեկրալի խօշապը.— Շէվթալինները առանց վիրաւորե-
լու առատ ջուրով խաշէ, մէջը քարանֆիլ, թարչին եւ
բաւականաչափ ալ չաքար դիր, եփէ եւ պաղեցուր: Թարմ
պտուղներու խօշապները միւսնոյն ձեւով կը պատրաստուին:

ՅՈՒՆԱՀԱՅ ՄԵԾ ԳՐԱՏՈՒՆ « Հ Ո Ր Ի Չ Ո Ն »

ՕՏՕՍ ՄԵՂԱԼՕ ԱԼԷՔՍԱՆՏՐՈՒ, ՔԱՎԱԼԱ

Կը հայթայիէ ամէն տեսակ վիպական, թատերական, գիտական, պատմական, բանասիրական, երգիծական, կրօնական եւ զգրոցական գիրքեր, բառարաններ, ֆրանսերէն մէթոտներ եւայլն :

Ն Ո Ր Հ Ր Ս Տ Ս Ր Ս Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

	Տրախմի
Մայիսի 28 (Հր. Հ. Յ. Գ. Բարիդի նսխակմ.)	22.50
Ճամբորդը՝ Ա. Ահարոնեան	90
Հատրնտիր էջեր Քուջակէն՝ Ա. Չօպանեան	20
Հայրենի Քնար՝ " "	40
Տղու. Հոգիներ՝ " "	30
Մեր Գրականութիւնը՝ " "	12.50
Հայ Ազգը «Մեղաւոր» չէ " "	10
Հին Հայոց Գեղար. վարպետներ՝ Կ. Բասմ.	50
Անիի Արզամբ (Հայ-Ֆրանս. բացաւ.) " "	20
Histoire moderne des Armeniens՝ Կ. Բ.	40
Սեռն ու Սէրը (տղոց համար)՝ Ա. Ճէզ.	25
Վեներական Ախտեր՝ Տօքթ. Քօլօլեան	10
Արիսի Սիրահարը, վէպ	50
Կնոջ Հոգիներ՝ Սիպիլ	50
Կորսուած կտակը՝ Յ. Հաճեան	35
Խոսքիւղի Քնաչըջիկը	35
Վերթէր՝ Կէօթէ	25
Խոհանոցին Գիրքը	20

Գին. — Յունաստան.....
Արտասահման.....

Գրմել ուղղակի մեր հասցէին՝ կանխիկով. —
Mr. Lévon Djérahian
Librairie «Horizon»
Cavalla — Grèce

ՏՊԱԳՐ. «ՆՈՐ ՕՐ»
Ա. Թ. Լ. Ն. Ք.
1936

2013

«Ազգային գրադարան»

 NL0082422

4